Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԿՐԿՆԱՁԱՏԿԻ ՏՈՆԻՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 ապրիլի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.ամէն:

«Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէ՛մ, մոռասցի զիս աջ իմ:
Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ թէ ոչ յիշեցից զքեզ»
(Սաղմ. ճԼԶ. 5–6)։

Դարերի խորքից արձագանքում են սաղմոսերգուի կարոտավառ եւ ողբանվագ այս երգի ելեւէջները. «Եթե մոռանամ քեզ, Երուսաղե՛մ, թող ձեռքս չորանա, եթե չհիշեմ քեզ, Երուսաղե՛մ, թող մեխվի լեզուս իմ քիմքին»։ Ահա այսպես է հիշողությունների եւ երազների օրոցքում մխիթարության ու հանգստության օթեւաններ գտնում բռնադատվածի տառապյալ հոգին։

Մեր հիշողություններն ու երազներն այսօր, սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, մեզ տանում են ոչ հեռավոր քսաներորդ դարասկզբի ժամանակահատված, երբ աշխարհը փոթորկված էր պատերազմական լայնածավալ գործողություններով։ Համաշխարհային խառնաշփոթի մեջ տեղի ունեցավ մեր ժողովրդի մեծագույն ողբերգությունը՝ Հայոց ցեղասպանությունը՝ Մեծ եղեռնը, որի խորհրդանշական թվագրումը մեր ժողովրդի հավաքական հիշողության մեջ դրոշմված է 1915 թվականի ապրիլի քսանչորսով։ Այդ ժամանակներում Օսմանյան կայսրությունը պատմական Հայաստանի արեւմտյան հատվածում սառնասիրտ դաժանությամբ իրագործեց Հայոց ցեղասպանություն։

Սոսկալի ոճրագործությանը զոհ գնաց ավելի քան մեկ եւ կես միլիոն հայ։ Բազմահազար բռնի տեղահանվածներ քշվեցին սիրիական անապատներ։ Ամենուր ոչնչացվեցին կամ պղծվեցին հայկական մշակութային ժառանգության դրոշմները. հայկական ինքնությունը դարձավ

դատավճիռ։ Հայոց սոսկալի ջարդերից անցել է ավելի քան հարյուր տարի՝ ցավի, տառապանքի, նվաստացման, հուսախաբությունների, բայց նաեւ ամոքման ու վերականգնման տարիներ։ Սոսկալի ջարդերի սահմռկեցուցիչ տեսարանների առջեւ համբացած աշխարհը տակավին համընդհանուր ու համարժեք դատապարտության չի արժանացրել ցեղասպանության հանցագործությունը։ Այն մեր ժողովրդի նկատմամբ շարունակվում է նաեւ այսօր եւ կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ չեն վերացվել մեր ազգին հասցված հոգեւոր, հոգեբանական, բարոյական, մշակութային ու նյութական ահռելի կորուստների հետեւանքները։ Հայոց ցեղասպանության հանդուրժումը, դրա կոծկումը կամ ժխտումը համազոր են նոր ցեղասպանությունների խրախուսմանն ու քաջալերմանը։ Հայտնի իրողություն է, որ այս անպատժելիությունից ոգեշնչված՝ նացիստներն իրագործեցին Հոլոքոսթը։ Հանդուրժել մեղքը նշանակում է ոչ միայն հանցակից դառնալ մեղսագործին, այլեւ ճանաչել նրա օրինաչափությունը, նվիրագործել մեղսագործությունը, հանցագործությունը դարձնել կենսակերպ եւ հարաբերությունների պարզաբանման գործիք։

Մեր ժողովուրդն իր պատմական առաքելության ճանապարհին մերժել է ոճրագործությունը որպես գործիք կիրառելու փորձառությունը։ Այլատյացության մեղքը երբեք բույն չի դրել մեր հոգիներում, ուրիշների ազատությունների եւ համոզումների հանդեպ թշնամանքի որոմը երբեք չի ծլարձակել հայոց անդաստաններում. սա է մեր քրիստոնեական ինքնության սիրո շաղախը, եւ սա է սիրո բովանդակությունը։ Ցեղասպանության ոճրագործությունից հետո անգամ մեր ժողովուրդը երբեք չի կորցրել սիրելու իր առանձնահատուկ կարողությունը։ Մենք ցավ ու մորմոք ունենք մեր հոգում, բայց ոչ երբեք՝ ատելություն։ Մեր պահանջատիրությունը հավատարմություն է ցեղասպանության նահատակների սուրբ հիշատակին, եւ ոչ երբեք՝ թշնամություն եւ ատելություն այլոց նկատմամբ։ Ահռելի եւ սարսափելի ոճրագործությունն անգամ չի չարացրել մեր ժողովրդին։ Ուրանալ, մոռանալ, չհիշել ցեղասպանության նահատակներին նշանակում է ժխտել սեփական ինքնությունը, հրաժարվել արժանապատվությունից եւ վերջապես նշանակում է ուրանալ հենց Իրեն՝ Աստծուն։ Աստվածային սիրո պատգամի նվիրագործումը երբեք ու երբեք չի ներառում ազգային ու հոգեւոր ինքնությունից հրաժարվելու ճանապարհով այլոց հաճելի դառնալու ձգտում։ Ներողամտությունն ու սերը ընդհանուր ոչինչ չունեն վախվորած հարմարվողականության եւ

թուլական մորթապաշտության հետ։ Մեր նահատակները մեր ուժն են ու մեզ զորություն են պարգեւում այնքան ժամանակ, որքան կպահպանենք հավատարմությունը մեր սուրբ նահատակների նկատմամբ։ Այնքան ժամանակ, որքան կպայքարենք ցեղասպանության աղետալի հետեւանքների վերացման համար, ահա, ճիշտ այդքան ժամանակ կշարունակենք մնալ հավատարիմ մեր ինքնությանը, կշարունակենք արժանապատվություն եւ հարգանք ունենալ ինքներս մեր նկատմամբ եւ կդառնանք արժանի զավակը մեր նահատակված հայրերի։

Ցեղասպանության մտովի ժխտումն անգամ եւ կամ անտեսումը հանցակցություն են ցեղասպանների հետ, ահա դրա համար նահատակների հիշատակի նվիրական այս օրը սաղմոսերգուի հետեւողությամբ եւ նրա ողբաձայնությամբ ուխտերգի նման հնչեցնում ենք ամենքս .«Ո՜վ սուրբ նահատակներ, եթե մոռանանք ձեզ, թող չորանան մեր ձեռքերը, եթե չհիշենք ձեզ, թող մեր քիմքերին մեխվեն մեր լեզուները»։

Սիրելի՜ քույրեր եւ եղբայրներ, վրեժխնդրությունը չէ մեզ առաջնորդող գաղափարը, Եկեղեցին՝ որպես աստվածային կառույց, ճշմարտության բացահայտման ճանապարհով փրկության առաջնորդելու իր առաքելության մեջ առանձնահատուկ հանձնառություն ունի նաեւ առարկայորեն՝ ճշգրտորեն գնահատելու պատմական իրադարձությունները, գնահատելու՝ առանց տրվելու աշխարհիկ նպատակահարմարություններին։ Եկեղեցին պարտավորված է գործել մի տիրույթում, որտեղ ջանքերը չեն պակասում արդարության վերականգնման համար, մի տիրույթում, որտեղ ճշմարիտ եւ ճշգրիտ ախտաճանաչողությունը զուգակցվում է հոգեւոր խնամքի հետ՝ մեղսագործի զղջմանը, մեղսագործի հատուցմանը եւ վերջ ի վերջո մեղսագործի արդարացմանը հասնելու համար։

Սիրել բարեկամին եւ սիրել անգամ թշնամուն ավետարանական պատգամները միշտ զուգորդված են ինքդ քեզ սիրելու մասին Քրիստոսի պատվիրած նախերգանքով։ Ասված է՝ սիրի՛ր ընկերոջդ այնպես, ինչպես սիրում ես ինքդ քեզ։ Այդ պատգամով է, որ ուրիշներին սիրելու քրիստոնեական չափասահմանը դառնում է այն սերը, որը տածում է անձն ինքն իր նկատմամբ, որ ժողովուրդն ինքը տածում է իր նկատմամբ։ Սեփական անձի հանդեպ ունեցած այս սերը, այս հարգանքը եւ արժանապատվության զգացումն են, որ քրիստոնյային օժտում են այլոց սիրելու կարողությամբ։ Ցեղասպանության սուրբ նահատակների նվիրական հիշատակի առջեւ ուխտի այս օրը մենք պարտք ունենք մեր նախնիների, մեր

սերունդների եւ Աստծու առջեւ, պարտք ունենք հաղթահարելու սիրո ու ներողամտության ճգնաժամը, մեր ազգային կյանքում լոկ կեղծիք են ու խաբեություն ուրիշին սիրելու մեր հավաստիացումները, կեղծիք են, քանի որ եթե չունենք սեր ինքներս մեր, մեր զավակների, մեր եղբայրների նկատմամբ, ինչպե՞ս կարող ենք սիրել այլոց։

Նվիրական հիշատակի այս առավոտ իմ հոգու խորքերից Քրիստոսի անունով, սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, դիմում եմ ձեզ, դիմում եմ ամենքիդ՝ թափանցելու համար ձեր սրտի ամենանվիրական խորքերը։ Ամուր պահենք մեր հայկական ինքնությունը, չտրվենք քաղաքական եւ գաղափարական այլածին եւ օտարամուտ հոսանքներին, ամեն ինչից առաջ եւ ամեն ինչից վեր մաքուր պահենք հայրենիքի սրբազան տարածքը, մաքուր պահենք օտարամուտ բարքերից եւ կենսակերպից։ Մեզ չեն ների մեր նահատակները, մեզ չի ների Ինքը՝ Աստված, եթե ոչնչացնենք թանկարժեք այն ավանդը, որ մեզ փոխանցվել է Աստծուց, պահպանվել է սերունդների զրկանքներով եւ զոհաբերությամբ։

Ցեղասպանության նահատակներն այլեւս սրբացած են, նրանք կարիք չունեն մեր զորակցության, մենք ենք, որ պետք ունենք նրանց բարեխոսությանը, նրանց զորությանը, նրանց հիշատակին։ Նրանց հիշատակով ենք մենք զորանում, նրանց հիշատակով ենք մենք հայանում, նրանց հիշատակի նկատմամբ հավատարմությամբ է, որ արտահայտում ենք արժանապատվություն, ինքնություն եւ դիմագիծ ունենալու մեր ձգտումը եւ մեր վճռականությունը։ Ահա այս պահին, մեր հայացքն ուղղելով դեպի երկինք, հայցում ենք մեր սուրբ նահատակների բարեխոսությունը մեր երկրի խաղաղության եւ ապահովության համար։

Աղոթում ենք մեր ժողովրդի կյանքում պատմական արդարության հաստատման եւ վերականգնման համար։ Աղոթում ենք, որ հարություն առած Աստված առատորեն օրհնի եւ շնորհազարդի մեր ժողովրդի զավակներին ամեն տեղ, ամեն տեղ, ուր կան հիվանդներ, ուր կան նեղյալներ, ուր կան ընկճվածներ, ուր կան տառապյալներ եւ սրտով բեկվածներ։ Եւ թող Աստված առաջնորդի ամենքիս՝ մեր ժողովրդի բոլոր զավակներին, դեպի նոր ձեռքբերումներ եւ նոր հաջողություններ։ Այժմ եւ միշտ, հավիտյանս հավիտենից. ամեն։

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն ընդ մեզ եւ ընդ ամենեսեանս. ամէն։